«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Աթոյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատի միջն. դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Թեմա՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Հարց՝ Ինչպե՞ս 6 տարեկան երեխային նախապատրաստել դպրոցին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳՈՒԽ 1 5

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 5

ԳԼՈՒԽ 3 9

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ 9

ԳԼՈՒԽ 3 13

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆԸ 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքում ներկայացվում է դպրոց ընդունվող երեխայի տարիքային առանձնահատկությունները, ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները:

Աշխատանքը ուսումնասիրելիս հիմք են հանդիսացել Աշոտ Տեր-Գրիգորյանի, Ջ. Գյուլամիրյանի մեթոդական ձեռնարկները:

Նյութը բաղկացած է 3 գլուխներից, որտեղ խոսվում է.

1. Կրտսեր դպրոցականի հոգեբանական բնութագրի,

2. Դպրոցական ուսումնառության շեմին վեց տարեկան երեխայի դպրոցական ուսումնառությանը ներկայացվող պահանջների,

3. դպրոցական ուսումնառությանը պատրաստվածության մասին:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել, վեցամյա երեխայի դպրոց հաճախելու պատրաստվախությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը

2. Բացահայտել երեխայի հոգեբանական պատրաստվածությունը դպրոց մտնելուն:

3. Առանձնացնել այն գործոնները, որոնք մեծ դեր են կատարում և նպաստում վեցամյա երեխային դպրոցին նախապատրաստելու համար:

Խաչվող հասկացություններ՝ օրինաչափություն, կայունություն և փոփոխություն, անհատ և հարաբերություններ, զարգացում, պատճառ և հետևանք:

ԳՈՒԽ 1

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կրտսեր դպրոցականի տարիքը սկսվում է 6-7 տարեկան հասակում ու ավարտվում է 9-10 տարեկանում:

Այս տարիքային փուլում փոքրիկը դեռևս պահպանում է բազմաթիվ երեխայական հատկանիշներ, սակայն արդեն սկսում է կորցնել վարքի մանկական անմիջականությունը, և նրա մոտ առաջ է գալիս մտածողության նոր որակ:Ուսումը դառնում է առաջնային գործունեություն, իսկ դպրոցում նա սկսում է ձեռք բերել ոչ միայն գիտելիքներ, այլ նաև նոր սոցիալական դիրք:

Դպրոց ընդունվելու հետևանքով երեխայի կյանքը դառնում է խիստ կանոնակարգված. սկսած այդ պահից ամեն օր նա պետք է հաճախի դպրոց, չուշանա, ներկա լինի բոլոր դասերին, ուշադիր լսի ուսուցչին:

Դպրոց ընդունվելու հետ մեկտեղ երեխայի վարքը կարգավորվում է նոր կոնկրետ նպատակներով՝ լինել լավ աշակերտ, ուսուցիչներից նկատողություններ չստանալ և այլն:

Այս շրջանում առաջընթաց են ապրում հասարակական ոլորտի իմացությունները՝ մտքեր, գիտելիքներ և ենթադրությունները այն սոցիալական աշխարհի մասին, որտեղ ապրում է երեխան:

Սոցիալական իմացության ձևավորման վրա ուժեղ ազդեցություն ունեն հասակակիցների հետ հարաբերությունները:

Այս տարիքում (5 – 7 տարեկան) տեղի են ունենում ինտենսիվ հոգեբանական և վարքային փոփոխություններ: Այս տարիքը բնութագրվում է ճանաչողական – իմացական զարգացմամբ: Երեխաները տիրապետում են հմտություններին, որոնք նրանց թույլ են տալիս ազատ շարժվել և հասնել նպատակին (օր՝ խաղի ժամանակ):

Նրանց մոտ սահմանափակ է մեկ գործողության վրա կենտրոնանալու հնարավորությունը: Երեխան այս տարիքում շուտ է հոգնում և ունի գործողությունների փոփոխության կարիք: Նրանք սկսում են տարբերակել իրականը իրենց պատկերացրածից:Սկսում են հասկանալ, որ մարդիկ տարբեր են և ունեն

տարբեր կարծիքներ:Փոխվում է նրանց կողմնորոշումը:Նրանք կարող են դասավորել դեպքերն ըստ հերթականության,ի վիճակի են լուծել գործնական խնդիրներ,ցույց տալ

Կոնկրետ մարդկանց տեղը և պատմել նրանց գործողությունների մասին:Սակայն նրանք կարող են նաև չտարբերել իրական դեպքը երևակայականից:

Յոթ տարեկանի ճգնաժամը: Տարիքային ճգնաժամ ասելով հասկանում են տվյալ տարիքային փուլում առաջ եկող նշանակալից հոգեբանական փոփոխությունների և դրանց հետ կապված ուժեղ ապրումների ընդհանրությունը: Յոթ տարեկանի ճգնաժամն ունի ընդհանուր առանձնահատկություններ, սակայն այն կրում է շատ անհատական բնույթ.մի երեխայի մոտ այս ճգնաժամը կարող է երևան գալ 5 տարեկանում,մյուսի մոտ 8 տարեկանում:Մի երեխայի մոտ ճգնաժամը կարող է ունենալ համեմատաբար հանդարտ ընթացք, մյուսի մոտ՝ կրել բուռն և կտրուկ բնույթ:

Երեխան փոխվում է, դառնում է քմահաճ, վարքում նկատվում են որոշակի ձևական,արհեստական, անհեթեթ դրսևորումներ,ծամածռություն.երեխան, կարծես ծաղրածու է ձևացնում: Ճգնաժամի արդյունքում երեխան սկսում է գիտակցել սեփական զգացմունքները,հոգեվիճակները,հասկանում է, թե ինչ է նշանակում (ես ուրախ եմ), (ես բարկացած եմ)և այլն: Դրա շնորհիվ նա այլ կերպ է սկսում վերաբերվել ինքն իրեն. գիտակցված գնահատական է տալիս սեփական գործողություններին և զգացմունքներին: Այս տարիքի կարևոր ձեռքբերումներից է ինքնասիրության և ինքնագնահատականի ձևավորումը,ինչում մեծ է նրան շրջապատող մեծահասակների դերը:

Մտավոր կարողություններից նրանց մոտ սկսում է զարգանալ դասավորելը և դասակարգելը:

Նրանք կարող են հիշել և պատմել իրենց զգացմունքների մասին և կարող են հասկանալ զգացմունքների պատճառները:Այս տարիքում սկսում է ձևավորվել ինքնակառավարումը (օր. զսպել զայրույթը):Նրանք հասկանում են ուրիշների զգացմունքները և բարի են ու արձագանքող,այդ իսկ պատճառով կարող են հեշտությամբ շահագործվել մեծերի կողմից:Այս տարիքի երեխաների հետ զրույց կազմակերպելու համար անհրաժեշտ է.

1.Օգտագործել հասարակ և հասկանալի բառեր:

2.Հարցեր տալիս՝ չճնշել երեխային հայացքով կամ ձայնով: Պետք է հիշել,որ երեխաները գիտեն,որ մեծահասակն ունի լիազորություններ: Մեծերի առավելությունը գիտակցելը կարող է նրանց մոտ առաջ բերել ցանկություն մեծերին օգնել ու բավարարել նրանց պահանջները:Այս ամենի հիմքում մեծ դեր կարող է խաղալ մեծերի նկատմամբ ունեցած վախերի զգացումը:

3.Երեխաները դեռ չեն կարողանում հաշվել և ճիշտ ներկայացնել դեպքերի հաջորդականությունը:Ուստի պետք է խուսափել այդպիսի հարցերից:

4.Չպետք է կրկնել միևնույն հարցը:

5.Անհրաժեշտ է բավարարվել երեխայի պատասխանով, եթե նույնիսկ այդ պատասխանը (չգիտեմ) է:

Այս տարիքում (8-12տարեկան) երեխայի գործողությունները համակարգված են և կամավոր: Կարողանում են գնահատել մարդկանց վարքը և գործողությունները՝ բարոյականության սկզբունքներից ելնելով:

Երեխաները կարողանում են գնահատել իրենց հաջողություններն ու դժվարությունները և՛ դպրոցում, և՛ ընկերների շրջանում: Եթե երեխան ներգրավված է հանցավոր գործողությունների մեջ, նա կարողանում է գիտակցել իր դերը: Նա արդեն ի վիճակի է գնահատել ընտանիքում տիրող իրավիճակը: Այս տարիքում ֆիզիկական և հոգեսեռական զարգացումն ունի նշանակալի դեր:

Այս տարիքի երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է.

1.Թույլ տալ երեխային ազատ արտահայտել իր կարծիքը:

2.Չխուսափել ավելի բարդ հարցերից:

3.Մասնագիտական տերմինների օգտագործումը կարող է նրանց մոտ վախեր առաջացնել: Կարիք կա նրանց տալ պարզ բացատրություններ:

4.Հարգանքով և վստահությամբ վերաբերվել երեխայի հետ հարցազրույցի ժամանակ:

5.Չթերագնահատել նրա մտավոր կարողությունները:

6.Ապահովել մշտական բացատրություններ ու տեղեկատվության տրամադրում:

Իմացական ոլորտի զարգացումը

Կրտսեր դպրոցականի անձնային բուռն փոփոխությունները զուգակցվում են իմացական գործընթացների զարգացմամբ, ինչը կարևոր է երեխայի ընդհանուր զարգացման համար: Իմացական գործընթացների՝ ուշադրության, ընկալման, հիշողության, մտածողության և երևակայության օգնությամբ մարդը ճանաչում է արտաքին աշխարհը, կուտակում է կենսական փորձ, գիտելիքներ, հմտություններ: Նշված գործընթացները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն, քանի որ այս տարիքում դրանք առավելապես են ենթակա զարգացման և մեծապես դրանից է կախված ապագայում երեխայի հարմարված,հոգեբանորեն հասուն և հաջողակ լինելը:

Կրտսեր դպրոցականների մոտ ընկալումն արդեն բավականաչափ զարգացած է:Նրանք լավ տարբերակում են իրերի գույնը ,ձևը, չափը, դրանց դասավորվածությունը տարածության մեջ, սակայն կարող են սխալներ թույլ տալ միմյանց նման առարկաների, թվերի, տառերի դեպքում:

Այս տարիքում առաջ է գալիս սինթեզող կամ համադրող ընկալումը: Երեխայի զարգացող ինտելեկտը արդեն թույլ է տալիս իմաստային կապեր հաստատել ընկալածի տարերի միջև: Օրինակ՝ նկարը պատմելիս, 2-5 տարեկան երեխաներն ուղղակի թվարկում են առարկաները (վերլուծող ընկալում),6-9 տարեկան երեխաները նկարագրում են դրանք:Այս տարիքում ընկալումը դեռևս կապված է գործողությունների հետ:

ԳԼՈՒԽ 3

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ

Անցումը 12-ամյա կրթության նոր խնդիրներ է դրել մասնագետների և ծնողների առջև:

Նախկինում երեխաները դպրոց էին գնում 7 տարեկանից, և դպրոցական ծրագիրը նախատեսված էր այդ տարիքի երեխայի համար:Այժմ երեխաները դպրոց հաճախում են 6 տարեկանում, հետևաբար պետք է հաշվի առնել այդ տարիքի առանձնահատկությունները:

Երեխայի տարիքային զարգացումը

Լ.Ս.Վիգոտսկին որպես տարիքային փուլերի չափանիշ դիտարկում է հոգեկան ոլորտում նորագոյացությունները,որոնք բնորոշ են զարգացման որոշակի փուլի համար: Տարիքային նորագոյացություն ասելով՝հասկանում ենք անձի ձևավորման և գործունեության այն նոր տիպը, հոգեկան և սոցիալական այն փոփոխությունները, որոնք առաջին անգամ դրսևորվում են այդ տարիքում, և որոնցով պայմանավորված է երեխայի զարգացման ընթացքն այդ փուլում:

Հոգեկան ոլորտի՝տարիքին բնորոշ փոփոխությունները կատարվում են կամ կտրուկ և միանգամից, կամ էլ դանդաղորեն և որոշակի հետևողականությամբ:

Կայուն ժամանակահատվածներում երեխայի զարգացումը ունի համեմատաբար դանդաղ, էվոլյուցիոն բնույթ: Այդ ժամանակահատվածը ընդգրկում է մի քանի տարի:

Հոգեկան ոլորտում փոփոխությունները սահուն են տեղի ունենում և հաճախ արտաքուստ չեն նկատվում: Միայն համեմատական վերլուծության միջոցով (տարիքային փուլի սկզբում և վերջում) կարելի է նկատել փոփոխությունները: Համաձայն Լ.Վիգոտսկու՝ առանձնացնում են երեխայի տարիքայի զարգացման հետևյալ կայուն փուլերը՝

- մանկիկություն (2 ամսականից -1 տարեկան)
- վաղ մանկություն (1-3 տարեկան)
- նախադպրոցական տարիք (3-6 (7) տարեկան)

- կրտսեր դպրոցական տարիք (6-11 տարեկան)

- դեռահասության տարիք (11-15 տարեկան)

- ավագ դպրոցական տարիք (15-17 տարեկան)

Ճգնաժամային փուլերը համեմատաբար կարճ են տևում՝մի քանի ամսից մինչև մեկ տարի, երբեմն 2 տարի: Այդ ժամանակահատվածում երեխայի հոգեկան աշխարհում տեղի են ունենում հիմնավոր փոփոխություններ:

Տարիքային ճգնաժամ ասելով՝ հասկանում են տարիքայի տվյալ փուլում դրսևորվող հոգեբանական էական փոփոխությունների և դրանց հետ կապված ուժեղ ապրումների ընդհանրությունը: Այս փուլերում նկատվում են երեխայի անձի զարգացման նշանակալի փոփոխություններ:

Ճգնաժամային փուլերն են՝

- նորածնի ճգնաժամ

- 1տարեկանի ճգնաժամ

-3 տարեկանի ճգնաժամ

- 6 կամ 7 տարեկանի ճգնաժամ

- դեռահասության ճգնաժամ (12-14 տ.)

- պատանեկության ճգնաժամ (17-18 տ.)

Երեխան ճգնաժամային փուլերում արդեն ունեցած կարողություններից ավելի շատ կորցնում է, քան ձեռք է բերում նորը,կորչում է հետաքրքրությունը նախկին խաղալիքների հանդեպ,խախտվում են ջերմ հարաբերությունները շրջապատող մարդկանց հետ, երեխան հրաժարվում է վարքային կանոններին ենթարկվելուց:

Տարբեր երեխաների մոտ ճգնաժամային փուլերը տարբեր կերպ են ընթանում:Որոշ երեխաների մոտ դրանք հարթ,հանդարտ ընթացք ունեն,մյուսների մոտ սուր և հիվանդագին դրսևորումներ են ունենում:

Շատ կարևոր է տարբերել ճգնաժամի ախտանիշները կայուն փուլերի նեգատիվ պահերից (մանկական սուտ,նախանձ և այլն), որովհետև մեծահասակի վարքը տարբեր ախտանիշների դեպքում էապես տարբերվում է:

Ընդունված է տարբերել ճգնաժամի յոթ նշաններ

-Նեգատիվիզմ. երեխան չի ուզում որևիցե բան անել, որովհետև մեծահասակն է արել այդ առաջարկը: Մանակական նեգատիվիզմը տարբերվում է սովորական

չլսելուց նրանով, որ նեգատիվիզմի դրդապատճառը բացասական վերաբերմունքն է մեծահասկների պահանջի նկատմամբ՝անկախ բովանդակությունից,իսկ չլսելու դրդապատճառը մեծահասակի առաջադրանքը կատարելու ցանկության բացակայությունն է:

Համառություն. երեխան պնդում է ինչ-որ բան ոչ թե նրա համար, որ նա դա ուզում է, այլ որովհետև պահանջել է: Համառության դրդապատճառը ինքնահաստատման ձգտումն է:

Ինքնուրույնություն. ամեն ինչ ինքնուրույն անելու ձգտում: Այս բոլոր ախտանիշները ունեն նույն հիմքը՝շրջապատի կողմից ընդունված լինելու պահանջմունք, ինքնուրույնության ձգտում:

Կամակորություն.վառ արտահայտվում է 3 տարեկանի ճգնաժամային փուլում:Ի տարբերություն նեգատիվիզմի՝արտահայտվում է ոչ թե մեծահասակների դեմ,այլ ընդհանրապես իշխում է հակառակության ոգին. չի ուզում կատարել ցանկացած մարդու ասածը:

Արժեզրկում. մեծահասակների հանդեպ կոպիտ վերաբերմունք է դրսևորում (կարող է ասել վատ բառեր, կոպտել և այլն), ինչպես նաև անխնա և անփույթ է վերաբերվում իրերին (պատռում է գրքերը,կոտրում է խաղալիքները):

Բռնակալություն.(դեսպոտիզմ).երեխան ձգտում է իշխանություն ձեռք բերել շրջապատի հանդեպ, ենթարկել իր ցանկություններին:

Ճգնաժամի դրական կողմն այն է, որ երեխան դառնում է ինքնուրույն, հեշտանում է մեծահասակից առանձնանալու գործընթացը: Երեխայի զարգացումը պայմանավորված է մտերիմ մեծահասակի հետ շփումով:Երեխան մեծահասակի հետ շփվելու ընթացքում ձեռք է բերում մարդկության փորձը: Շփման միջոցով մեծահասակները՝առաջին հերթին ծնողները ազդում են երեխայի վրա:Մեծահասակների հետ շփման պակասը վաղ զարգացման փուլերում բացասական է անդրադառնում ոչ միայն մտավոր,այլ նաև անձի ընդհանուր զարգացման վրա:

3 տարեկանի ճգնաժամը խոսում է այն մասին, որ երեխային այլևս չեն բավարարում նախկին խնամքի և հսկողության ձևերը.նա ծնողներից պահանջում է

իր նկատմամբ այլ մոտեցումներ: Այսինքն՝այս փուլն առաջին հերթին երեխայի և նրան շրջապատող մեծահասակների փոխհարաբերությունների ճգնաժամն է:

6 -7 տարեկանի ճգնաժամ

Այս տարիքում երեխան կորցնում է այն անմիջականությունը և պարզամտությունը,որ ուներ մինչ այդ:Այդպիսի փոփոխությունների պատճառը երեխայի գիտակցության մեջ ներքին և արտաքին կյանքի տարբերակումն է:

6 տարեկան երեխան արագորեն աճում է ֆիզիկապես և դրա հետ մեկտեղ տեղի են ունենում որոշակի փոփոխություններ նրա օրգանիզմում: Երեխան կտրուկ փոխվում է,դառնում քմահաճ,վարքում նկատվում են որոշակի ձևական, արհեստական, անհեթեթ դրսևորումներ.ծամածռություն. երեխան կարծես ծաղրածուի դեր է կատարում:

Կարևորագույն ձեռքբերումներից է սեփական «ես» -ի գիտակցումը և ներքին սոցիալական դիրքի ձևավորումը: Ի հայտ է գալիս վառ արտահայտված ձգտում կյանքում մեծահասակի դիրք զբաղեցնելու և կատարելու նոր գործունեություն:Դպրոցական ուսուցման պայմաններում դա առաջին հերթին արտահայտվում է դպրոցականի սոցիալական դիրք զբաղեցնելու ձգտումով:

Ճգնաժամի արդյունքում երեխան սկսում է գիտակցել սեփական զգացմունքները, հոգեվիճակները, հասկանում է, թե ինչ է նշանակում ուրախությունը, տխրությունը և այլն: Դրա շնորհիվ նա այլ կերպ է սկսում վերաբերվել ինքն իրեն,սեփական գործողություններին և զգացմունքներին գիտակցված գնահատական է տալիս:Այս տարիքի հիմնական կարևոր ձեռքբերումը ինքնասիրության և ինքնագնահատականի ձևավորումն է.այս փուլում խիստ կարևորվում է երեխային շրջապատող մեծահասակների դերը:

Այսինքն՝6 տարեկան հասակում ճգնաժամի դրսևորումը խոսում է այն մասին,որ երեխան սոցիալական առումով պատրաստ է դպրոցական ուսուցման համար:

ԳԼՈՒԽ 3

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆԸ

6 տարեկանում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին,թե երեխան պատրաստ է արդյոք դպրոցական կյանքի ուսումնառության համար: Դպրոցական ուսումնառությանը պատրաստ լինել չի նշանակում միայն գրել-կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝սկսած ֆիզիկական զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը:

Առանձնացվում են դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրների չորս խումբ՝

- սոցիալական
- ֆիզիկական
- հուզակամային
- իմացական

Սոցիալական պատրաստվածությունն իր մեջ ներառում է երեխայի՝ հասակակիցների հետ շփվելու, իր վարքը խմբի կանոններին ենթարկելու, աշակերտի դերը կատարելու պահանջը:

Ֆիզիկական ոլորտը ընդհանուր առողջությունն է: Ընդհանուր ֆիզիկական զարգացումը կանոնավոր քաշն է,հասակը,մկանային տոնուսը և այլն,որոնք համապատասխանում են 6-7 տարեկան տղաների և աղջիկների ֆիզիկական զարգացածության պահանջներին: Տեսողության, լսողության,մատների նրբաշարժումների զարգացածության աստիճանը: Երեխայի նյարդային համակարգի վիճակը՝ գրգռվածության և հավասարակշռվածության աստիճանը: Ընդհանուր առողջական վիճակը: Ֆիզիկական ոլորտի պատրաստվածությունը նշանակում է շարժումների ճշգրտություն, ձեռքի վարժվածություն մանր շարժումներ կատարելուն, աչքի և ձեռքի շարժման համաձայնեցվածություն, գրիչ,մատիտ բռնելուն և դրանք գործածելու կարողություն:

Հուզակամային ոլորտը. անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է:Երեխայի համար դժվար է հարմարվել դպրոցական

կյանքին,եթե նա չի կարող տիրապետել և ղեկավարել սեփական անձը: Նա պետք է ժամանակին դպրոց գա,որոշակի ժամանակահատվածում դասարանում նստի,առաջադրանքները կատարի:

Իմացական ոլորտն իր մեջ ներառում է հետևյալ գործընթացները՝ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողությոն, ինչպես նաև ձեռքի մանր մոտորիկայի կամ նրբաշարժումների զարգացածության աստիճանը :Ձեռքի մանր մոտորիկայի զարգացածությունը նպաստում է խոսքի զարգացմանը,քանի որ խոսքի կենտրոնը և այն կենտրոնը, որը պատասխանատու է մատների շարժումների կոորդինացիայի համար,գլխուղեղում գտնվում են իրար կից և փոխազդում են միմյանց վրա: Նկարչությունը, ապլիկացիան, գրաֆիկական վարժությունները կնախապատրաստեն նախադպրոցականներին գրելու հմտությանը: Նախադպրոցական տարիքի ավարտին երեխայի ձեռքը գրելուն պատրաստ է լինում:

Նշված գործընթացները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն, քանի որ այս տարիքում դրանք առավելապես ենթակա են զարգացման և կատարելագործման,և դրանց զարգացածության աստիճանից մեծապես կախված է ապագայում երեխայի հարմարված,հոգեբանորեն հասուն և հաջողակ լինելը: Ըստ Լ. Վիգոտսկու ինտելեկտուալ պատրաստվածությունը երեխայի ինտելեկտուալ գործընթացների զարգացման մակարդակն է.առաջին հերթին, առարկաները և երևույթները համապատասխան խմբերում ընդհանրացնելու և տարբերակելու,ապա բառերով արտահայտելու ունակությունն է:

Ընկալում:Այս գործընթացն առավելագույնս պայմանավորված է արտաքին աշխարհից եկող տեղեկատվության վերամշակումով:Սրա արդյունքում առաջ են գալիս հոգեկան պատկերներ,որոնց շնորհիվ հետագայում զարգանում են մտածողությունը, հիշողությունը, հույզերը: Սակայն ընկալման ժամանակ մարդը պասսիվ չէ, արտաքին աշխարհն ընկալում է՝ առաջնորդվելով իր պահանջմունքներով,հետաքրքրություններով և այլն: Ընկալման ընթացքում անպայման դրսևորվում ենանձի առանձնահատկությունները:

Ընկալման գործընթացի հիմնական առանձնահատկություններն են առարկայնությունը (շրջապատող միջավայրում առարկայի՝որպես առանձին

երևույթի առանձնացում), ամբողջականությունը (մեկ երևույթի կամ առարկայի սահմաններում ընդհանուրի և առանձին մասերի օրգանական փոխկապակցվածության ընկալում), ընդհանրացվածությունը (յուրաքանչյուր առարկայի և երևույթի դասակարգում որոշակի անուն ունեցող օբյեկտների խմբում):

Նախադպրոցականների ընկալումն արդեն բավականաչափ զարգացած է: Նրանք լավ տարբերում են առարկաների գույնը, ձևը, չափը, տարածության մեջ գրված դիրքը: Նրանք կարող են պատկերել պարզ և հասարակ առարկաներ, ներկել դրանք պահանջվող գույներով:

Այս տարիքում առաջ է գալիս սինթեզող կամ համադրող ընկալումը. երեխաների զարգացող ինտելեկտն արդեն թույլ է տալիս իմաստային կապեր հաստատելու ընկալված առարկայի տարրերի և մասերի միջև:

Թեև այս տարիքում ընկալումը դեռևս գործողություններով է պայմանավորված,սակայն նախադպրոցական տարիքի երեխան կոնկրետ իրավիճակի սահմաններից դուրս որոշ մտահանգումներ և եզրակացություններ արդեն կարողանում է անել:

Հիշողություն: Նախադպրոցական տարիքում հիշողությունը սկսում է զարգանալ երկու ուղղությամբ.այն ձեռք է բերում կամածին բնույթ և իմաստավորվածություն: Նախադպրոցականներն ունեն լավ զարգացած մեխանիկական հիշողություն: Հետագայում բառային-տրամաբանական և պատկերավոր հիշողության տեսակները աստիճանաբար գերիշխող են դառնում, բայց նախնական ուսուցման ընթացքում բառային (վերբալ)մեխանիկական հիշողությունը մնում է առաջատար:

Երևակայություն: Երեխայի երևակայությունը զարգանում է հիմնականում խաղի ընթացքում և սկզբնական շրջանում անմիջական ընկալվող առարկաների ու դրանցով խաղային գործողությունների կատարման սերտ կապով է պայմանավորված:Տարիքի հետ արտաքին հենարանների անհրաժեշտությունը հետզհետե կորչում է,և առաջ է գալիս անցնում դեպի նոր որակի խաղային գործունեություն, որն իրագործվում է առանց առարկայի անմիջական առկայության և մտքում երևակայական առարկաներով գործողությունների իրականացման միջոցով:

Այս տարիքում շատ կարևոր է տարբեր հնարների միջոցով զարգացնել երեծայի երևակայությունը, քանի որ հոգեկան այս ֆունկցիան կարևոր դեր ունի ուսումնական ողջ գործընթացում:

Մտածողություն: Ուսուցման գործընթացի ինտելեկտուալ պատրաստվածությունը ընդհանրացնելու, համեմատելու, օբյեկտները դասակարգելու կարևոր հատկությունները առանձնացնելու, եզրակացություններ կատարելու ընդունակությունն է: Երեխայի խոսքը պետք է ունենա որոշակի զարգացածություն և իմացական ակտիվություն:

Այս տարիքում մտածողությունը աստիճանաբար նկատելիորեն զարգանում և դառնում է հոգեկան գերակայող ֆունկցիա: Երեխայի մոտ առաջ են գալիս տրամաբանորեն ճիշտ մտահանգումներ,սակայն դրանք հնարավոր են դեռևս միայն կոնկրետ պատկերավոր նյութի, առարկայի առկայության դեպքում: Նրանք կարողանում են տեսնել առարկաների և երևույթների պատճառահետևանքային կապերը,նամանավանդ եթե իրը կամ առարկան տեսանելի և շոշափելի է նրանց համար:

Ուշադրություն:Առանց զարգացած ուշադրության անհնար է կազմակերպել ուսուցման գործընթացը:Երեխան պետք է կարողանա որոշակի ժամանակահատվածում կենտրոնանալ որևէ խնդրի կամ հանձնարարության կատարման վրա, որոշակի արագությամբ տեղափոխել ուշադրությունը մեկ խնդրից մյուսին:Սակայն այս գործընթացի կամածին բնույթը նախադպրոցականների մոտ դեռ լավ զարգացած չէ. դեռևս գերակայում է ոչ կամածին ուշադրությունը.արտաքին վառ,անսպասելի,հետաքրքիր տպավորությունները հեշտությամբ կարող են նրանց ուշադրությունը շեղել առաջադրանքից: Դեռևս թույլ է զարգացած նաև ուշադրության կայունությունը:

Ուշադրությունն ունի տարբեր հատկություններ՝ կայունություն, տեղափոխելիություն, բաշխում, ծավալ.տարբեր երեխաների մոտ այս հատկությունները տարբեր կերպ են զարգանում՝ստեղծելով անհատական տարբերակներ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր երեխաներն են նախադպրոցական տարիքի ավարտին պատրաստ լինում դպրոցին կամ

ուսումնառության նկատմամբ համապատասխան դրդապատճառ (մոտիվացիա)ունենում:Սա հանգեցնում է այն բանին, որ երեխան հետ է մնում իր հասակակիցներից, դժվարանում է կատարել ուսուցչի և ծնողների՝ աստիճանաբար բարդացող պահանջները: Որպես հետևանք, առաջ են գալիս հոգեբանական մի շարք հիմնախնդիրներ.երեխան դժկամությամբ է գնում կամ ընդհանրապես հրաժարվում է դպրոց գնալուց և այլն:

Դպրոցական առաջին օրվանից երեխան հայտնվում է նոր պայմաններում՝հանդիպելով մինչ այդ իրեն անծանոթ գործունեության ձևերով պայմանավորված որոշակի դժվարությունների:Այդ դժվարությունները հաղթահարելու համար դպրոց ընդունվող երեխան պետք է ունենա հետևյալ նախադրյալները:

1.Կազմաբանախոսական զարգացման՝տվյալ տարիքին ներկայացվող չափանիշները բավարարող մակարդակ.

. Կրթության օրենքով նախատեսված անձնագրային որոշակի տարիք,

. ֆիզիկական զարգացման՝բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան մակարդակ,

. տվյալ տարիքին համապատասխան կենսաբանական զարգացման որոշակի մակարդակ (առողջական վիճակը տվյալ պահին, կրած ծանր հիվանդությունները,բժշկասոցիոմետրիկ չափերը և այլն):

2.Հոգեֆիզիոլոգիական զարգացման որոշակի աստիճան.

. Բարձրագույն նհամակարգի զարգացման բավարար աստիճան.

. Հուզակամային ոլորտի՝իր տարիքին համապատասխան դրական բնութագիր.

. պլանաչափ ու երկարատև (տարիքին համապատասխան) մտավոր աշխատանք կատարելու համար անհրաժեշտ ունակություններ.

.Հոգեկան բոլոր գործընթացների (հիշողություն, ուշադրություն, մտածողություն, խոսք, կամք)՝ իր տարիքին համապատասխան մակարդակ,

. Կոնկրետ և վերացական մտածողության որոշակի մակարդակի առկայություն, դրանց ճիշտ հարաբերակցություն :

3.Ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ որոշակի դրդապատճառների և կարողությունների զարգացածության բավարար մակարդակ.

Ուսումնական գործունեության նոր պահանջներին հարմարվելու և ըստ դրանց գործելու ունակություն,որոնք չեն հակասում նրա հնարավորություններին ու պահանջմունքներին,

. իր տարեկիցների հետ հաղորդակցվելու, համագործակցելու և համակեցության կանոնները պահպանելու որոշակի ունակություններ,

. ուսումնական խնդիրներ լուծելու իր քայլերը պարզ գործողություններով պլանավորելու,դրան համապատասխան քայլեր կատարելու ունակություններ,

. ուսումնական գործունեություն ծավալելու, ծրագրային նյութը յուրացնելու համար անհրաժեշտ լեզվական մտածողության մակարդակ,

. նախադպրոցական դաստիարակության ծրագրով նախատեսված գիտելիքների, ունակությունների և հմտությունների որոշակի պաշար,

. որոշակի բառապաշարով, պարզ և ընդարձակ նախադասություններով խոսք կառուցելու, հարցեր տալու, ուսուցչի և ընկերների տրված հարցերը հասկանալու, իմաստավորելու և դրանց պատասխանելու ընդունակություններ,

.փոքրիկ բանաստեղծություններ, հանելուկներ, շուտասելուկներ արտասանելու, ունկնդրած հեքիաթները, պատմվածքները բնագրին հարազատ վերարտադրելու, դրանց բովանդակության և գործող անձերի վերաբերյալ տրված պարզ հարցերին պատասխանելու ունակություններ,

. ուսուցչի տված հանձնարարությունը հասկանալու և այն կատարելիս ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ,

. մատների նուրբ շարժումների ներդաշնակ և բավարար զարգացման մակարդակ:

Ուսումնական գործունեությանը երեխայի պատրաստականության աստիճանի մասին անհրաժեշտ է ունենալ տեղեկությունների ևս մի քանի խումբ,որոնք կարելի է ստանալ ծնողներից կամ նրա խնամքով զբաղվող այլ մարդկանցից.

1. Երեխայի բնավորության առանձնահատկությունները. ուսումնական գործունեության նկատմամբ նրա վերաբերմունքը, ջանասիրություն, փոքրի

բանաստեղծություններ, երգեր սովորելու նրա ցանկությունն ու ընդունակությունը,հաշվելու, նկարելու, կտրելու, կարելու, սոսնձելու պարզ առաջադրանքներկատարելու կարողություններ, որոշակի ժամանակահատվածում միևնույն գործողությամբ զբաղվելու ունակություն և այլն:

2.Երեխայի հետաքրքրությունների շրջանակը. Ինչով է սիրում զբաղվել,ինչպես է անցկացնում ազատ ժամանակը, ինչ խաղալիքներով է սիրում խաղալ,հեռուստատեսային ինչ հաղորդումներ է սիրում դիտել, համակարգչային գործունեության ինչ հետաքրքրությունների է դրսևորում և որքան ժամանակ է անընդմեջ տրամադրում հեռուստատեսությանը և համակարգչին, ինչ ստեղծագործություններ է սիրում ունկնդրե, պատմել, ինչ թեմաների շուրջ է սիրում զրույցի բռնվել, ինչ հարցեր է տալիս և այլն:

3. Միջանձնային հարաբերությունները. զգայուն է մարդկանց նկատմամբ, ինչպես է իրեն պահում տարեկիցների (մեծերի) հետ հաղորդակցվելիս, որևէ գործ կատարելիս համագործակցում է նրանց հետ, սուտ խոսում է, հարմարվելու հանդուրժողամանության առկայությունը և այլն:

4. Աշխատանքային կարողությունները. Տնային գործերում ունի ոչ բարդ հանձնարարություններ, դրսևորում է ինքնասպասարկման, հիգիենայի տարրական կարողություններ, սիրով է կատարում իրեն հանձնարարած գործերը, սիրում է մասնակցել հասարակական հանրօգուտ աշխատանքներին և այլն:

5. Գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները.

Ինչպես է վերաբերվում երաժշտությանը,նկարելու, ծեփելու ուղղությամբ ինչպիսի կարողություններ ունի, ինչ կինոնկարներ է նախընտրում դիտել, հաճախում է մանկական թատրոն և կարողանում է պատմել իր տեսածի մասին,ուշադիր է բնության փոփոխությունների , բնության ձայների և երևույթների նկատմամբ և այլն:

6.Ընկերային հարաբերությունները . ինչպիսի երեխաների հետ է սիրում ընկերություն անել,իրենից փոքր (մեծ), ֆիզիկապես ուժեղ (թույլ), ենթարկվող (լիդեր) և այլն, ինչպես է վերաբերվում նրանց, ինչպես է արտահայտվում ընկերների մասին, ինչն է գնահատում ընկերների մեջ և այլն:

Այսպիսով դպրոցական ուսուցմանը պատրաստ կարելի է համարել այն երեխաներին, ովքեր ոչ միայն անձնագրային տարիքով և ֆիզիկական տվյալներով

համապատասխանում են որոշակի չափանիշների,այլև կարող են մտածել ու ինքնուրույն գործել, համագործակցել տարեկիցների հետ և հասնել հուզական-զգացմունքային որակների զարգացման որոշակի աստիճանի, այսինքն՝նրանց մտածողությունը, կամքը և հույզերը ներդաշնակորեն համակցված են:

Այս ամենի առկայությունը մանկական գիտակցության մեջ հանգեցնում են նրան,որ երեխան դպրոց ընդունվելու պահին իր համար նոր՝ դպրոցական սոցիալական դերին, ուսումնական գործունեության և կոնկրետ ու ընդհանրացված գիտելիքներ ձեռք բերելուն պատրաստ է լինում: Այսինքն՝նրա մեջ ձևավորված է լինում պարբերական ուսուցման համար անհրաժեշտ հոգեբանական և անձնային պատրաստվածություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երեխայի ծավալուն ուսումնական գործունեության արդյունավետությունը՝ աշակերտների վերաբերմունքը ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են դպրոցական առաջին օրերի մանկավարժահոգեբանական տեսանկյունով աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ, այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք հատուկ են 6 տարեկան երեխաներին:

Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել նրանց զարգացումը, երբ իրականացվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

Որքան էլ այդ առանձնահատկությունները բազմազան են ու բազմաբնույթ, այնուամենայնիվ, օրինաչափորեն դրանք կարելի է խմբավորել:

Այսպիսով, հետազոտական աշխատանքում հանգեցի այն եզրակացության, որ երեխան դպրոց ընդունվելու պահին իր համար նոր՝ դպրոցական սոցիալական դերին, ուսումնական գործունեության և կոնկրետ ու ընդհանրացված գիտելիքներ ձեռք բերելուն պատրաստ է լինում: Այսինքն՝ նրա մեջ ձևավորված է լինում պարբերական ուսուցման համար անհրաժեշտ հոգեբանական և անձնային պատրաստվածություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշոտ Տեր- Գրիգորյան «Հայոց լեզվի մեթոդիկա»
2. Ջ.Գյուլամիրյան «Մայրենիի ուսուցման մեթոդիկա»
3. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, պրոֆ. Ս. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Եր., 1977
4. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Եր., Տոներ, 2005,
5. Выготский Л. С., Психология искусства, М., 1986,
6. Глинкина О. В., Адаптация первокурсника // Профессиональное образование, 2002, N9, С. 12–16.
7. Խաչատրյան Ս., Կրթության փիլիսոփայություն (ձեռնարկ ուսանողների համար), Եր., Լինգվա, 2009,
8. https://hy.wikipedia.org/